ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(2016 – 2021)

Խմբագրական խորհուրդ՝ **Ա. Հ. Մակարյան** (նախագահ), **Մ. Ա. Ճաղարյան, Ա.Մ.Հովսեփյան, Գ.Կ.Ավետիսյան**

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշներ.

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տպարան, Իջևան, 2021, 79 էջ:

Սույն վերլուծական ուսումնասիրության նպատակը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների առանցքային ցուցանիշները վերջին հինգ տարիների համար: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Սույն վերլուծությունը նաև կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը:

Հասցեագրվում է բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

Բնագավառ 1. Ընդունելություն և համակազմ 6

Բնագավառ 2. Ուսումնական գործընթաց 22

Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում 40

Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ 56

Բնագավառ 5. Գիտություն և նորարարություն 67

Բնագավառ 6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն 75

Նախաբան

Սույն վերլուծությունը կատարվել է 2020-21 ուստարվա ավարտին՝ ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրների իրականացման արդյունքների վերլուծության շրջանակներում՝ Մասնաճյուղի համապատասխան կառույցների մասնակցությամբ:

Ուսումնասիրության՝ ստորև ներկայացվող արդյունքներն ունեն երկակի նշանակություն: Առաջին հերթին այս ցուցանիշները կարող են հիմք ծառայել բուհի ինքնավերլուծության ու գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև տարեկան և եռամյա հաշվետվությունների ստեղծման համար, մյուս կողմից դրանք կարող են օգտագործվել Համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրի և հաջորդ SWOT (ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների) վերլուծությունների համար:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) առաջարկվող լրակազմն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար: Որպես չափիչ գործիք՝ ԳԱՑ-երը կոնկրետ են, պարզ և հաշվարկելի: Դրանց առկայությունը պլանավորման գործընթացում ապահովում է վերջինիս նպատակների, խնդիրների և ռազմավարության գործնականությունը:

Միջավայրով ուղղորդվող ռազմավարական պլանավորումը ենթադրում է բուհի գործունեության (կամ կատարողականի) գնահատում և համեմատում՝ բուհի կամ նրա շահակիցների կողմից սահմանված «ցանկալի» ցուցանիշների հետ՝ ապահովելով կապը բուհի և միջավայրի կարևորագույն տարրերի միջև: ԳԱՑ-երն այն անհրաժեշտ հենքն են, որոնք կապակցում են բուհի կարևորագույն գործառույթները պլանավորման գործընթացի հետ: Այս ցուցանիշների օգտագործումը ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական պլանավորման գործընթացում մեզ հնարավորություն է տվել հիմնական ռազմավարական ոլորտներում համեմատել ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքները կամ կատարողականը այլ բուհերի, ԵՊՀ ԻՄ-ի նախորդ տարիների և պլանավորված ցուցանիշների հետ:

Առաջարկվող ցանկում կա ցուցանիշների երկու տեսակ, որոնք ձևավորում են ԳԱՑ-երի լրակազմը: Առաջինը գործ ունի մասնաճյուղի հիմնական գործունեության որոշակի արդյունքի չափման հետ, արդյունք, որի նկատմամբ ԵՊՀ ԻՄ-ն ունի վերահսկողության հնարավորություն: Ցուցանիշների այս խումբը կոչվում է գործունեության արդյունքի գնահատման առանցքային ցուցանիշներ: ԳԱՑ–երի երկրորդ խումբը կապված է այն պայմանների չափման հետ, որոնք անմիջականորեն ազդում են բուհի «առողջական» վիճակի և բարեկեցության վրա, պայմաններ, որոնց նկատմամբ բուհը կարող է ունենալ փոքր վերահսկողություն կամ ընդհանրապես չունենալ:

Համաձայն ընդունված մեթոդաբանության՝ ուսումնասիրությունը կատարելիս իրականացվել են հետևյալ հաջորդական քայլերը:

Առաջին քայլը, որ կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկի կազմման ուղղությամբ, Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների պարզումն է, որտեղից էլ ընտրվել են ամենակարևոր ԳԱՑ-երը: Առանձնացվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության 6 հիմնական ոլորտներ.

1. Ընդունելություն և համակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում
4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորարարություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Այնուհետև սահմանվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքի գնահատման և «առողջական» վիճակի ցուցանիշները: Կատարվել է

ԳԱՑ-երի ուսումնասիրություն և վերլուծություն ըստ տարիների՝ 2016-2021 թթ. ժամանակահատվածի համար: Ստորև բերված է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկը՝ բաղկացած 68 ցուցանիշներից և դասակարգված ըստ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների:

Առաջարկվող վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ ԻՄ-ի և նրա ստորաբաժանումների վարչակազմերին, բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՆԱԳԱՎԱՌ 1.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱԶՄ

Յուցանիշ 1.1.	Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)
Յուցանիշ 1.2.	Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.3.	Դիմորդների բաշխումն ըստ մարզերի
Յուցանիշ 1.4.	Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)
Յուցանիշ 1.5.	ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 1.6.	Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)
Յուցանիշ 1.7.	Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.8.	Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին
Յուցանիշ 1.9.	Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունն ընդունվածների թվին
Յուցանիշ 1.10.	Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)
Յուցանիշ 1.11.	Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.12.	Հեռակա ուսուցման համակազմը (բակալավրիատ) և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.13.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.14.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.15.	Ուսանողների շարժը (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.1. Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)

Ցուցանիշ 1.1	2016	2017	2018	2019	2020
Դիմորդների թիվն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների	**434**	**370**	**237**	**336**	**439**
Բակալավրիատ (առկա)	**228**	**195**	**103**	**220**	**266**
Հումանիտար գիտություններ	112	103	46	94	129
Բնական գիտություններ	60	45	21	42	40
Տնտեսագիտական	41	24	24	60	76
Կիրառական արվեստ	15	23	12	24	21
Բակալավրիատ (հեռակա)	**206**	**175**	**134**	**116**	**135**
Մագիստրատուրա	0	0	0	0	**38**
Մանկավարժական	0	0	0	0	38

2020/21 ուստարվա ընդունելության գործընթացում գրանցված դիմորդների թիվը գերազանցել է նախորդ հինգ տարվա ցուցանիշը: Առկա ուսուցմամբ դիմորդների թիվն ավելացել է մասնավորապես Հումանիտար գիտությունների ֆակուլտետում (կազմել է դիմորդների ընդհանուր հոսքի 48.5%-ը):

Առկա ուսուցմամբ նախընտրելի են համարվել հիմնականում «Ֆինանսներ» (ըստ ոլորտի), «Զբոսաշրջություն» «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերը, իսկ հեռակա ուսուցմամբ՝ «Զբոսաշրջություն» և «Պատմություն» կրթական ծրագրերը:

2020թ.-ից վերսկսվել է մագիստրատուրայի ընդունելությունը նոր՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով:





Յուցանիշ 1.2. Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

Յուցանիշ 1.2	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Ընդհանուր դիմորդների թիվը	11324	9710	5456	11046	14543
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը(առկա)	228	195	103	220	266
ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը	2.01%	2.01%	1.89%	1.99%	1.83%

Գնահատման և թեստավորման կենտրոնի հրապարակած տվյալների համաձայն 2020 թվականի ընդունելության քննությունների հիմնական փուլին հայտագրվել է 14543 դիմորդ, և 2020թ.-ին մասնաճյուղի դիմորդների թիվը նախորդ տարիների համեմատ ամենաբարձրն է՝ **266**: Վերջին 5 տարվա տվյալներով ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների բաժնեմասն ընդհանուր դիմորդների համակազմում կայուն է՝ մոտավորապես **1.8%-2%,** ընդ որում, 2020թ.-ին կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր թվում այն կազմել է **1.83%,** որը նախորդ տարիների ցուցանիշներից ցածր է, սակայն ընդհանուր առմամբ վատ ցուցանիշ չէ, եթե հաշվի առնենք, որ ՀՀ-ում դիմորդների ընդհանուր թիվն էապես աճել է նախորդ տարիների համեմատ: Նշենք, որ 2018-2019 ուստարվա ցածր ցուցանիշները պայմանավորված են հանրապետությունում 12-ամյա կրթության անցմամբ և Տավուշի մարզի ավագ և միջնակարգ դպրոցներում շրջանավարտների և դիմորդների ընդհանուր թվի նվազմամբ:





Ցուցանիշ 1.3. Դիմորդների բաշխումն ըստ մարզերի

Ցուցանիշ 1.3	2016		2017		2018		2019		2020	
Երևան	6	1.38%	5	1.33%	3	1.24%	1	0.45%	**7**	**2.63%**
Կոտայք	2	0.46%	2	0.53%	0	0.00%	0	0.00%	1	0.38%
Արմավիր	0	0.00%	1	0.27%	0	0.00%	0	0.00%	1	0.38%
Գեղարքունիք	11	2.53%	5	1.33%	10	4.13%	1	0.45%	2	0.75%
Շիրակ	0	0.00%	0	0.00%	0	0.00%	0	0.00%	1	0.38%
Արարատ	1	0.23%	1	0.27%	1	0.41%	0	0.00%	1	0.38%
Լոռի	1	0.23%	5	1.33%	1	0.41%	1	0.45%	1	0.38%
Արագածոտն	1	0.23%	1	0.27%	0	0.00%	0	0.00%	1	0.38%
Սյունիք	0	0.00%	0	0.00%	1	0.41%	0	0.00%	0	0.00%
Տավուշ	**411**	94.70%	**346**	92.02%	**222**	91.74%	**217**	98.64%	**251**	**94.36%**
Վայոց ձոր	0	0.00%	0	0.00%	1	0.41%	0	0.00%	0	0.00%
Այլ երկրներից	1	0.23%	**10**	2.66%	**3**	1.24%	0	0.00%	0	0.00%
Ընդամենը	434		376		242		220		266	

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2020թ. դիմորդների ընդհանուր թվի գրեթե 94,4%-ը Տավուշի մարզից են: Տոկոսային ցուցանիշը պայմանավորված է մարզում Երևանի պետական համալսարանի մասնաճյուղն ունենալու, որակյալ կրթություն ապահովելու, ինչպես նաև տարածաշրջանում բարձր հեղինակություն ունենալու հանգամանքով /հիմք՝ *Արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները*/: Դիմորդների ընդհանուր թվի գրեթե 5,66%-ը Երևան քաղաքից և ՀՀ այլ մարզերից են (Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Արագածոտն, Կոտայք, Արարատ, Արմավիր): Հայաստանի հանրապետության այլ մարզերից ԵՊՀ ԻՄ դիմորդների տոկոսային ցածր ցուցանիշը պայմանավորված է Երևանում և ՀՀ այլ մարզերում գործող բուհերի առկայությամբ:





Յուցանիշ 1.4. Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)

Յուցանիշ 1.4	2016	2017	2018	2019	2020
Բակալավրիատ	**196**	**168**	**76**	**166**	212
Անվճար	40	39	39	35	43
Վճարովի	156	129	37	131	169
Մագիստրատուրա	0	0	0	0	25
Անվճար	0	0	0	0	0
Վճարովի	0	0	0	0	25

2020թ. ընդունելությամբ մասնաճյուղն ունեցել է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումամբ (անվճար) 41 տեղ: Ընդունելության արդյունքներով միասնական քննությունների և ատեստատի հավասար գնահատականների պատճառով 2 դիմորդի ևս հատկացվել է անվճար տեղ (Պատմություն, Հոգեբանություն կրթական ծրագրեր): 2020-2021 ուստարվա ընդունելության արդյունքներով պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ գրանցվել է ամենաբարձր ցուցանիշը:

Վճարովի հիմունքներով մասնաճյուղն ունեցել է 404 տեղ, դրանց մեծ մասը մնացել է թափուր՝ պայմանավորված նախ դիմորդների թվաքանակով, ապա նաև ընդունելության քննությունները չհաղթահարելու հանգամանքով:



Ցուցանիշ 1.5. ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

Ցուցանիշ 1.5	2016	2017	2018	2019	2020
Կենտրոնացված ընդունելության ծավալը	9635	8495	4616	10421	13131
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	**196**	**168**	**76**	**166**	**212**
ԵՊՀ ԻՄ բաժնեմասը ընդունելության ընդհանուր ծավալում (%)	**2.03**	**1.98**	**1.65**	**1.59**	**1.61**

2020 թվականի ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակարգում **(1.61%)** գերազանցել է 2019թ.-ի ցուցանիշը: Գրանցվել է նաև ընդունվածների թվի աճ, որը պայմանավորված է դիմորդների ընդհանուր ծավալի ավելացմամբ՝ նախորդ ուստարիների համեմատությամբ:





Ցուցանիշ 1.6. Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (առկա դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)

Ցուցանիշ 1.6	2016	2017	2018	2019	2020
Բակալավրիատի (առկա) դիմորդների թիվը	228	195	103	220	266
Ընդունվածների թիվը	196	168	76	166	212
Մրցութային ցուցանիշը (բակ.)	**1.16**	**1.16**	**1.36**	**1.33**	**1.25**
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	0	0	0	0	38
Ընդունվածների թիվը	0	0	0	0	25
Մրցութային ցուցանիշը (բակ.)	0	0	0	0	**1.52**

2018-2019 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների մրցութային ցուցանիշը նախորդ 2 ուստարիների համեմատ բարձրացել է, այն ցույց է տալիս, որ քննությունները հաղթահարել են ավելի քիչ դիմորդներ (մոտավորապես, դիմորդների 73.8%-ը), ինչը պայմանավորված է ոչ միայն դիմորդների թվի, այլ նաև ընդունվածների թվի նվազմամբ: Իսկ ահա 2019, 2020 թվականների համար մրցութային ցուցանիշը Մասնաճյուղի համար մոտենում է 1-ին, ինչը նշանակում է, որ դիմորդների **76-ից 80 տոկոսին** հաջողվում է հաղթահարել ընդունելության քննությունները: 2020թ.-ին Մասնաճյուղում կազմակերպվել է նաև մագիստրատուրայի ընդունելություն, և մրցութային ցուցանիշն այնքան էլ բարձր չէ՝ ընդունվել է դիմորդների 65.8%-ը:





Ցուցանիշ 1.7. Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում

Ցուցանիշ 1.7	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը	434	370	237	336	439
ԵՊՀ ԻՄ իգական սեռի դիմորդների թիվը	241	210	112	203	273
Հարաբերությունը (դիմորդներ)	55.5%	56.8%	47.3%	60.4%	62. 2%
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	397	338	116	218	325
ԵՊՀ ԻՄ իգական սեռի ընդունվածների թիվը	219	195	74	165	223
Հարաբերությունը (ընդունվածներ)	55.2%	57.7%	63.8%	75.7%	68. 6%

2020/21 ուստարվա ընդունելության արդյունքներով դիմորդների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը կազմել է **62.2%:** Ընդունվածների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը կազմում է **68. 6%,** որը պայմանավորված է միասնական քննությունների պահանջներին իգական սեռի դիմորդների բավարար պատրաստվածությամբ: Իգական սեռի ընդունվածների մասնաբաժինը 2020/21 ուստարվա ընդունելության արդյունքներով նախորդ տարիների համեմատությամբ ամենաբարձրն է. դա նույնպես վկայում է աղջիկների ավելի լավ պատրաստվածության մասին: Եվ պետք է նշել նաև, որ աղջիկ դիմորդների **80%**-ից ավելին հաղթահարում է քննությունները:

Ընդունելության արդյունքներով իգական սեռի բարձր ցուցանիշը պայմանավորված է նաև մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվող կրթական ծրագրերի ուղղվածությունից: Առկա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն», «Դիզայն», «Հոգեբանություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերը, իսկ հեռակա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերը նախընտրելի են բացառապես իգական սեռի դիմորդների համար:





Յուցանիշ 1.8. Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Յուցանիշ 1.8	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Դիմորդների թիվը (բակալավրիատ,առկա)	**0**	**0**	**0**	**0**	**0**
Ընդունվածների թիվը	**0**	**0**	**0**	**0**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	0	0	0	0
Դիմորդների թիվը (մագիստրատուրա)	0	0	0	0	0
Ընդունվածների թիվը	0	0	0	0	0
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	0	0	0	0
Դիմորդների թիվը (բակալավրիատ,հեռակա)	**1**	**0**	**0**	**0**	**0**
Ընդունվածների թիվը	**1**	**0**	**0**	**0**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	1	0	0	0	0

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը վերջին 4 տարիներին օտարերկրյա դիմորդներ չի ունեցել: Մասնաճյուղը խնդիր ունի օտարերկրյա դիմորդների հավաքագրման հետ կապված: Մասնաճյուղում չեն իրականացվում օտարալեզու կրթական ծրագրեր: Օտարերկրյա ուսանողների համակազմը մեծացնելու համար հարկավոր է ակտիվացնել աշխատանքները այլ երկրներից /հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից/ դիմորդներ ներգրավելու ուղղությամբ, իրականացնել հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Արտաքին կապերի բաժինը (*Հիմք՝15.12.2018թ. գիտխորհրդի թիվ 33 նիստի 33/9 որոշում*):

Ցուցանիշ 1.9. Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Ցուցանիշ 1.9	2016	2017	2018	2019	2020
Դիմորդների թիվը	206	175	134	116	135
Ընդունվածների թիվը	201	170	40	52	88
Մրցութային ցուցանիշ (Հարաբերությունը)	**1.02**	**1.03**	**3.35**	**2.23**	**1.53**

Հեռակա ուսուցման համակարգում 2018թ.-ի ընդունելության մրցութային ցուցանիշը վերջին մի քանի տարիների համեմատությամբ ամենավատ ցուցանիշն է: Այն պայմանավորված է հեռակա ուսուցման ընդունելության քննություններին դիմորդների ոչ բավարար պատրաստվածությամբ, քանի որ նրանց գերակշիռ մասը դժվարացել է հաղթահարել գնահատականների նվազագույն շեմը: 2020թ.-ի ընդունելության արդյունքներով այդ ցուցանիշն էապես բարելավվել է՝ **1.53**, ինչը վկայում է, որ բարձրացել է հեռակա ուսուցման համակարգի դիմորդների պատրաստվածության մակարդակը (դիմորդների **65.2%-ն** ընդունվել է):





Յուցանիշ 1.10. Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)

Յուցանիշ 1.10	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Հիմնական ուսանողական համակազմը	1685	1580	1433	1213	1288
Բակալավրիատ	**646**	**630**	**553**	**545**	**563**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	325	313	273	268	288
Բնական գիտությունների ֆակուլտետ	117	117	107	102	90
Տնտեսագիտության ֆակուլտետ	144	129	111	108	119
Կիրառական արվեստի ֆակուլտետ	60	71	62	67	66
Օտարերկրյա ուս. համակազմը	0	0	0	0	0
Հեռակա ուսուցում	**1039**	**950**	**880**	**668**	**700**
Մագիստրատուրա	0	0	0	0	**25**

2020/21 ուստարում ուսանողական համակազմը նախորդ ուստարվա համեմատությամբ աճել է և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման ձևերում: Իրողությունը պայմանավորված է մարզի շրջանավարտների թվի ավելացումով, ինչպես նաև ընդունելության միասնական մեկ քննության հանգամանքով, որը հնարավորություն է տալիս հաղթահարել ընդունելության շեմը: Ուսանողական համակազմի մեջ 2020թ.-ից արտահայտված է նաև մագիստրատուրայի ուսանողների թիվը, որն ակնհայտ է, հաջորդ ուստարիներին իր էական ազդեցությունը կունենա ուսանողականա համակազմի աճի վրա:







Ցուցանիշ 1.11. Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում

Ցուցանիշ 1.11	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
ԵՊՀ ԻՄ ուսանողների համակազմը	1685	1580	1433	1213	1288
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	**0**	0	0	0	0
Բակալավրիատ	0	0	0	0	0
Մագիստրատուրա	0	0	0	0	0
Օտարերկյա ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**0**	**0**	**0**	**0**	**0**

Մասնաճյուղը 2016/17, 2017/18, 2018/19, 2019/2020, 2020/2021 ուստարիներին օտարերկրյա ուսանողներ չունի: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է մշակել աշխատանքների համալիր ծրագիր, որը կնպաստի բուհի միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը: Հարկավոր է ակտիվացնել աշխատանքները օտարերկրյա (հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից) դիմորդներ ներգրավելու ուղղությամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Արտաքին կապերի բաժին (*Հիմք՝ 15.12.2018թ. գիտխորհրդի թիվ 33 նիստի 33/9 որոշում*):

Յուցանիշ 1.12. Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում

Յուցանիշ 1.12	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Հիմնական համակազմը	1685	1580	1433	1213	1288
Հեռակա ուսուցման համակազմը	1039	950	880	668	700
Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**61. 7**	**60.1**	**61.4**	**55.1**	**54.3**

Հեռակա ուսուցման համակարգում ուսանողների թվաքանակը 2020/21 ուստարում կազմել է հիմնական ուսանողական համակազմի 54.35%-ը: Դա պայմանավորված է ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան երկրորդ մասնագիտություն ստանալու ցանկություն ունեցող դիմորդների թվի աճով, ինչպես նաև ուսումը աշխատանքի հետ համատեղելու հանգամանքով:

Հեռակա ուսուցման ուսանողների թվաքանակը ընդհանուր համակազմում վերջին տարիներին նվազում է ընդունվածների թվաքանակի նվազման արդյունքում:





Յուցանիշ 1.13. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Յուցանիշ 1.13	2016	2017	2018	2019	2020
Ընդունելության ընդհանուր ծավալը	397	338	116	218	350
Բակալավրիատ(առկա, վճարովի)	156	129	37	131	169
Հեռակա ուսուցում	201	170	40	52	88
Մագիստրատուրա (վճարովի)	0	0	0	0	25
Ընդամենը վճարովի	**357**	**299**	**77**	**183**	**282**
Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)	**89.9**	**88.5**	**66.4**	**83.9**	**80.6**

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ընդհանուր ծավալում կազմել է 80.6%, որը պայմանավորված է 2020/21 ուստարվա առկա և հեռակա ընդունելության քննությունները հաղթահարած դիմորդների թվի աճով: Չնայած դրան, ընդունելության արդյունքներով թափուր է մնացել վճարովի համակարգով հատկացված տեղերի զգալի մասը:





Յուցանիշ 1.14. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Յուցանիշ 1.14	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Հիմնական համակազմ	**1685**	**1580**	**1433**	**1213**	1288
Բակալավրիատ(առկա)	494	475	401	393	409
Հեռակա ուսուցում	1039	950	797	667	700
Մագիստրատուրա	0	0	0	0	25
Ընդամենը վճարովի	**1533**	**1425**	**1198**	**1060**	**1134**
Հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**91.0**	**90.2**	**83.6**	**87.4**	**88.0**

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում վերջին 5 տարիների համար կազմում է՝ **84%-91%:** Այդ ցուցանիշը վերջին 3 տարիների համար ցածր է, ինչը պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգ ընդունելության ծավալի նվազմամբ: Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշռի բարձր ցուցանիշը (տոկոսը) պայմանավորված է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխատուցմամբ (անվճար) տեղերի սահմանափակ լինելու հանգամանքով, ինչպես նաև ուսանողական համակազմում հեռակա ուսուցման ուսանողների թվական գերակշռությամբ:





Յուցանիշ 1.15. Ուսանողների շարժը
(ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Յուցանիշ 1.15	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Հիմնական համակազմ	**1685**	**1685**	**1398**	**1433**	**1288**
Այլ բուհեր տեղափոխված բակալավրիատի ուսանողների թիվը	**3**	**3**	**0**	**3**	**2**
Այդ թվում՝ առկա ուսուցում				2	2
հեռակա ուսուցում				1	-
Այլ բուհերից տեղափոխված բակալավրիատի ուսանողների թիվը	**29**	**33**	**24**	**27**	**42**
Այդ թվում՝ առկա ուսուցում	**12**	**12**	**9**	**1**	**-**
հեռակա ուսուցում	**1**	**2**	**3**	**9**	**10**
ՄՄՈՒՀ-երից տեղափոխված՝ հեռակա ուսուցում	**16**	**19**	**13**	**17**	**32**

2020-2021 ուստարում այլ բուհերից մասնաճյուղ են դիմել 42 քաղաքացիներ (այդ թվում հեռակա ուսուցմամբ այլ բուհեր ավարտած 3 քաղաքացի մասնաճյուղ են դիմել երկրորդ մասնագիտությամբ)։



ԲՆԱԳԱՎԱՌ 2.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ցուցանիշ 2.1.	Անցումն առաջինից երկրորդ կուրս
Ցուցանիշ 2.2.	Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների
Ցուցանիշ 2.3.	Հիմնական դասախոսական կազմը (բաշխումն ըստ պաշտոնների, գիտական աստիճանով/առանց աստիճանի)
Ցուցանիշ 2.3.1.	Դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսների)
Ցուցանիշ 2.4.	Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)
Ցուցանիշ 2.5.	Դասախոսական կազմի տարեկան համալրումը (այդ թվում՝ ասպիրանտուրայից)
Ցուցանիշ 2.6.	Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ)
Ցուցանիշ 2.7.	Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը
Ցուցանիշ 2.8.	Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը
Ցուցանիշ 2.9.	Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը
Ցուցանիշ 2.10.	Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը
Ցուցանիշ 2.11.	Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը
Ցուցանիշ 2.12.	Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (այդ թվում՝ ըստ ուղղությունների)
Ցուցանիշ 2.13.	Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը
Ցուցանիշ 2.14.	Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)
Ցուցանիշ 2.15.	Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)
Ցուցանիշ 2.16.	Ուսանողների առաջադիմության դինամիկան ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի)

Յուցանիշ 2.1. Անցումն առաջինից երկրորդ կուրս /առկա ուսուցման ձև/

Յուցանիշ 2.1	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Բակալավրի ծրագրեր (%)	97,8	99,5	100.0	100	95.5
Մագիստրոսական ծրագրեր (%)	-	0.0	0.0	0	96

Առկա ուսուցման համակարգում նկատելի է առաջինից երկրորդ կուրս անցման կայուն ցուցանիշ. 2020-2021 ուստարում առաջինից երկրորդ կուրս է փոխադրվել բակալավրիատում ուսանողների **95.5%-ը**, մագիստրատուրայում՝ **96%**-ը:



Յուցանիշ 2.2. Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների

Յուցանիշ 2.2	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Բակալավրիատի ավարտական կուրսի ուսանողների թիվը					**365**
Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը	416	271	271	348	**353**
Ավարտած ուսանողների տեսակարար կշիռը (%)					**96.7**
Մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանողների թիվը	0	0	0	0	0
Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը	0	0	0	0	0
Ավարտած ուսանողների տեսակարար կշիռը (%)					

2020-2021 ուստարում ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են թվով 365 ուսանողներ (150-ը՝ առկա ուսուցման համակարգում և 215-ը՝ հեռակա ուսուցման համակարգում), այդ թվում 177 շրջանավարտներ ունեցել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, 101-ը՝ Բնական գիտությունների, 68-ը՝ Տնտեսագիտության և 19-ը՝ Կիրառական արվեստի ֆակուլտետները: Նախորդ տարվա համեմատությամբ 2020-2021 ուստարում շրջանավարտների թիվն աճել է Հումանիտար գիտությունների և Բնագիտական ֆակուլտետներում: Տնտեսագիտության ֆակուլտետում շրջանավարտների թվի նվազումը պայմանավորված է հեռակա ուսուցմամբ Սերվիս մասնագիտությամբ շրջանավարտ չունենալու հանգամանքով: Կիրառական արվեստի ֆակուլտետում շրջանավարտների ամենափոքր թիվը պայմանավորված է 2016-2017 ուստարվա առկա ուսուցմամբ ԵՊՀ ԻՄ ընդունվածների թվով:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել և դրական են գնահատվել առկա ուսուցման շրջանավարտների 100%-ը և հեռակա ուսուցման 94.4%-ը:



Ցուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսներ)

Ցուցանիշ 2.3	2016/17		2017/18		2018/19		2019/20		2020/21	
Պրոֆեսոր	3	**3.2%**	3	**3.1%**	4	**4.3%**	5	**6.1%**	5	**6.0%**
Դոցենտ	25	**26.6%**	28	**29.9%**	30	**32.3%**	28	**34.1%**	31	**36.9%**
Ասիստենտ և դասախոս	66	**70.2%**	66	**67.0%**	59	**63.4%**	49	**59.8%**	48	**57.1%**
Ընդամենը	**94**		**97**		**93**		**82**		84	
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	38	**40.4%**	45	**54.6%**	46	**49.5%**	42	**51.2%**	46	**54.8%**

Հիմնական դասախոսական կազմը վերջին 5 տարիների համար կայուն է՝ 84-ից 97: Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը վերջին 3 ուսումնական տարիներին աճել է և կազմում է դասախոսական կազմի **50-ից 55%-ը,** որը լավ ցուցանիշ է: Այն պայմանավորված է երիտասարդ կադրերի գիտական ձեռքբերումներով և նաև մայր բուհից գիտական աստիճանով պրոֆեսորա-դասախոսական կազմի համալրմամբ:





Ցուցանիշ 2.3.1. Հիմնական դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսների)

Ցուցանիշ 2.3. 1	2017/18		2018/19		2019/20		2020/21	
Պրոֆեսոր	0	0.0%	0	0.0%	1	1,6%	1	1.6%
Դոցենտ	14	20.6%	16	22.5%	17	26,6%	17	27.0%
Ասիստենտ և դասախոս	54	79.4%	55	77.5%	46	71,9%	45	71.4%
Ընդամենը	**68**		**71**		**64**		**63**	
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	**30**	**44.1%**	**26**	**36.6%**	**26**	**40,6%**	**26**	**41.3%**
Միայն ԵՊՀ ԻՄ-ում ուսումնագի-տական գործունեություն ծավալող դասախոսների թիվը	17	25.0%		0.0%		0.0%		0.0%
Այդ թվում՝ պետական համակարգի ղեկավար կազմի աշխատակից	13	19.1%	11	15.5%	9	14,1%	10	15.9%
Այդ թվում՝ մասնավոր ոլորտի ղեկավար կազմի աշխատակից	0	0.0%	0	0.0%	0	0.0%		0.0%

2020-21 ուստարում միայն մասնաճյուղում աշխատող հիմնական դասախոսները (**63** դասախոս) կազմել են ընդհանուր դասախոսական կազմի (**193,** ցուցանիշ 2. 4) գրեթե **33%**-ը: Ընդ որում, նրանց **41%**-ը գիտական աստիճանով է և նրանցում մեծ թիվ են կազմում մասնաճյուղի նախկին շրջանավարտները:

Իսկ այդ թվի նվազելը պայմանավորված է հիմնական և համատեղությամբ աշխատող դա-սախոսական կազմի թվաքանակի նվազմամբ և ժամավճարով աշխատող դասախոսների թվաքանակի աճով (Ցուցանիշ 2.4):



Յուցանիշ 2.4. Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

Յուցանիշ 2.4	2016/17		2017/18		2018/19		2019/20		2020/21	
Հիմնական և համատեղութ.	126	79.7%	**118**	71.5%	**129**	74.6%	**117**	64,3%	**116**	**60.1%**
Ժամավճար	32	20.3%	**47**	28.5%	**44**	25.4%	**65**	35,7%	**77**	**39.9%**
Ընդամենը	**158**		**165**		**173**		**182**		**193**	

Հիմնական և համատեղությամբ դասավանդող դասախոսների թիվը վերջին 5 ուստարիների համար հիմնականում կայուն է՝ 116-130 դասախոս:

Ժամավճարային հիմունքով դասավանդողների տոկոսը փոփոխական է, որը կախված է տվյալ ուստարվա առանձնահատկություններից, նոր մասնագիտություններում նեղ մասնագիտական դասընթացներով և հեռակա ուսուցման համակարգում նոր դասավանդողների ներառմամբ: Այն արտահայտվել է ժամավճարով աշխատող դասախոսների թվաքանակի ավելացման վրա. վերջին 3 ուստարիներին այդ թիվն աճել է: Սա անդրադարձել է նաև ընդհանուր դասախոսական կազմի թվաքանակի ավելացման վրա:



Յուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը

Յուցանիշ 2.5	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Դասախոսական կազմի համալրումը	0	-2	-2	-11	-19
Աշխատանքի ընդունված դասախոսների թիվը					
Հիմնական դասախոսական կազմ	94	97	93	82	84





Յուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ-ընդհանուր դասախոսների թիվ)

Յուցանիշ 2.6	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Ընդհանուր դասախոսական կազմ	126	118	129	116	116
Հաստիքներ	84	77.75	77.25	65. 25	65
Հաստիքների թիվ/դասախոսների թիվ հարաբերակցությունը	**0.67**	**0.66**	**0.60**	**0.56**	**0.56**

Վերջին հինգ տարիների ընթացքում հաստիքների օգտագործման գործակիցը համեմատաբար կայուն է՝ 0,56-0,67: Այն ցույց է տալիս դասախոսների միջին բեռնվածությունը և այդ ցուցանիշների 1-ից փոքր լինելը պայմանավորված է բեռնվածության հստակ նորմատիվների պահպանմամբ, դասավանդող-ների նեղ մասնագիտացմամբ և հրավիրված դասախոսների մեծ թվով, որոնք Մասնաճյուղում դասավանդում են ոչ լրիվ հաստիքով:





Յուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը

Յուցանիշ 2.7	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Ընդամենը՝ հիմնական դասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված)	97	95	93	82	84
Մինչև 35 տարեկան	17	17	64	16	12
35-65 տարեկան	69	67	7	57	58
65-ից բարձր	11	11	93	9	14
Միջին տարիք	**49.1**	**49.1**	**47.6**	**48,7**	**50.4**
Ընդամենը՝ հիմնական դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված)		68	71	64	63
Մինչև 35 տարեկան		14	19	14	12
35-65 տարեկան		50	47	44	42
65-ից բարձր		4	5	6	9
Միջին տարիք		**47.8**	**47.0**	**48.1**	**49.3**

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմը կայուն է: Պահպանվել են դասախոսական կազմում տարիքային բաշխման մասնաբաժինները, և միջին տարիքը կազմում է 48-50, որը տարածաշրջանային բուհի համար լավ ցուցանիշ է: Հիմնական դասախոսական կազմի միջին տարիքը 2020-21 ուստարում եղել է 50 և ԵՊՀ-ից հրավիրված համատեղությամբ աշխատող համակազմի հետ միասին դիտարկման արդյունքներով, և՛ առանց ԵՊՀ-ից հրավիրվածների:



Յուցանիշ 2.8. Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը

Յուցանիշ 2.8	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Մասնագիտական			2	0	9
Մանկավարժական			38	98	55
Համակարգչային			26	48	62
Այլ			29	12	80
Մեկ ուսումնական տարում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը	**0**	**0**	**95**	**158**	**206**

2011-16թթ. մասնաճյուղում իրականացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2010թ.-ի նոյեմբերի 18-ի թիվ 7 նիստում հաստատված Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը, որի շրջանակներում մասնագիտական, մանկավարժական և համակարգչային համապատասխան դասընթացներով որակավորման բարձրացում են անցել մասնաճյուղի դասախոսական կազմի 90-95%-ը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22 նիստում հաստատվել է նոր կրթագիտական ծրագիրը՝ 2017-2021 թթ., որով սկսվել է կրթագիտական ծրագրի իրականացման երկրորդ փուլը: Այդ ծրագրի շրջանակներում 2020-21 ուստարում իրականացվել են վերապատրաստման բավականին շատ առցանց դասընթացներ: 2020-21 ուստարում առաջին անգամ ԵՊՀ ԻՄ-ի դասախոսները մասնակցել են նաև ԵՊՀ-ում կազմակերպվող վերապատրաստման առցանց դասընթացներին: Կազմակերպվել են դասախոսների մանկավարժական հմտությունների զարգացման և կատարելագործման ուղղությամբ մի շարք դասընթացներ, որոնց միջինում մասնակցել են 55 դասախոս: Վերապատրաստումներ են իրականացվել նաև դասախոսների ՏՀՏ օգտագործման և առցանց ուսումնառության հարթակների օգտագործման հմտությունների զարգացման ուղղությամբ / Moodle, Zoom, Googel Apps/:



Ցուցանիշ 2.9. Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը

Ցուցանիշ 2.9	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Հիմնական դասախոսական կազմ	97	95	93	82	84
Իգական սեռի դասախոսներ	51	52	55	46	42
Իգական սեռի հաշվեկշիռը (%)	**52.6**	**54.7**	**59.1**	**56.1**	**50.0**

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմում իգական սեռի մասնաբաժինը հիմնականում կազմում է ավելի քան 50%, որը պայմանավորված է տարածաշրջանի ժողովրդագրական պատկերով և մասնաճյուղի համար կարելի է համարել լավ ցուցանիշ:





Յուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը

Յուցանիշ 2.10	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Ուսանողներ	1685	1580	1433	1213	1288
Դասախոսական հաստիքներ	84	77.75	77.25	65.25	65
Ուսանող/դասախոս հարաբերությունը	**20.06**	**20.32**	**18.55**	**18.59**	**19.82**

Վերջին 5 տարիների կտրվածքով ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը համեմատաբար կայուն է՝ 19-20, պայմանավորված ուսանողների թվի և դասախոսական հաստիքների համամասնական փոփոխությամբ:

Ուսանողների թվաքանակն ընդգրկում է նաև հեռակա ուսուցման համակարգով սովորողներին, իսկ 2020-21 ուստարվա համար նաև մագիստրատուրայում սովորողներին:





Յուցանիշ 2.11. Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը

Յուցանիշ 2.11	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Ուսանողներ	1685	1580	1433	1213	1288
Ուսումնաօժանդակ կազմ	24	27	16	19	19
Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	**70.21**	**58.52**	**89.56**	**63.84**	**67.79**

Համաձայն մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի վերջին 2 ուստարիներին մասնաճյուղում կատարվել է ուսումնաօժանդակ անձնակազմի օպտիմալացում՝ պայմանավորված նաև ուսանողների թվի նվազմամբ: Դրա արդյունքում ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը մեծացել է:





Ցուցանիշ 2.12. Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (ըստ ուղղությունների)

Ցուցանիշ 2.12	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	929.1	730.85	755.2	715.3	721.7
Բնական գիտությունների ֆակուլտետ	968.3	802.6	766.5	721.2	722.8
Տնտեսագիտության ֆակուլտետ	886.1	903.1	769.6	736.6	708.6
Կիրառական արվեստի ֆակուլտետ	675.2	651.05	716.9	735.95	726
Համահամալսարանական ամբիոններ	763.2	722.7	720.6	712.6	716
Համահամալսարանական միջինը	**844.4**	**762.1**	**745.8**	**724.3**	**719.0**

Դասախոսի միջին տարեկան բեռնվածությունը, սահմանված նորմերի համաձայն, կազմում է ոչ պակաս 700 ժամ: 2020/21 ուստարում մասնաճյուղում դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը գտնվում է սահմանված նորմատիվի շրջանակներում: Պետք է նշել նաև, որ վերջին 3 տարիներին դասախոսների միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը բոլոր ֆակուլտետներում գրեթե նույնն է և համարժեք է համահամալսարանական միջինին:



Յուցանիշ 2.13. Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը

Յուցանիշ 2.13	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի թիվը	7	1	10	1	1
Գիտամեթոդական ձեռնարկների թիվը					
Հիմնական դասախոսական կազմը	97	95	93	82	84
Մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը	**0.07**	**0.01**	**0.11**	**0.01**	**0.01**

Մասնաճյուղի դասախոսական կազմի կողմից հրատարակած ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի թիվը վերջին 2 ուստարիների համար փոքր թվեր են, որովհետև դրանց մեջ ներառված է միայն Մասնաճյուղի հիմնական պրոֆեսորա-դասախոսական կազմի ցուցանիշը: Այս ցուցանիշի բարձրացմանը, հույս ունենք, կաջակցի 2019 թվականի դեկտեմբերին ընդունված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ը:





Յուցանիշ 2.14. Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)

Յուցանիշ 2.14	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ(%)	87.0	89.0	81.7	74.5	**77. 1**
Բնական գիտությունների ֆակուլտետ (%)	77.1	62.7	62.1	48.7	**65. 3**
Տնտեսագիտության ֆակուլտետ (%)	72.4	67.3	64.1	66.5	**83. 4**
Կիրառական արվեստի ֆակուլտետ (%)	93.1	83.3	87.5	77.8	**81. 3**
Միջին տարեկան ցուցանիշը(%)	**82.4**	**75.6**	**73.8**	**66.9**	**76. 8**

2020-2021 ուստարում գրանցված առաջադիմության (լուծարքային շրջանից առաջ) միջին տարեկան ցուցանիշը բարձր է նախորդ երեք ուստարիների համեմատ և մասնաճյուղում կազմել է **76.8%:** Այսինքն, քննաշրջանները չի հաղթահարել ուսանողների 1/4 մասը, իսկ նախորդ ուստարի՝ ուսանողների 1/3 մասը: Վերջին 2 ուստարիների ցուցանիշների վրա, ակնհայտորեն, իր ազդեցությունն է ունեցել երկրում ստեղծված արտակարգ դրությունը (համաճարակ COVID-19), որի ժամանակ քննաշրջանները մասամբ իրականացվել են առցանց:



Ցուցանիշ 2.15. Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

Ցուցանիշ 2.15	2016/17		2017/18		2018/19		2019/20		2020/21	
	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4,68	4.62	4.59	4.33	4.60	4.71	4.70	4.70	**4.76**	**4.76**
Բնական գիտությունների ֆակուլտետ	4,40	4.49	4.48	4.34	4.25	4.64	4.58	4.58	**4.62**	**4.35**
Տնտեսագիտության ֆակուլտետ	4,81	4.76	4.67	4.66	4.64	4.71	4.76	4.71	**4.84**	**4.80**
Կիրառական արվեստի ֆակուլտետ	4,81	4.77	4.69	4.48	4.52	4.44	4.66	-	**4.70**	**4.60**
Համահամալսարանական ամբիոններ	4,54	4.55	4.78	4.62	4.60	4.59	4.72	4.75	**4.80**	**4.77**

Ուսանողների կողմից դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցաթերթիկում հարցերը գնահատվում են 5-միավորանոց սանդղակով: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներից, վարչական և ուսումնաօժանդակ ծառայություններից: 2020/21 ուստարվա երկրորդ կիսամյակի հարցման արդյունքներով ամենաբարձր միավորը գրանցվել է Տնտեսագիտության ֆակուլտետում, Համահամալսարանական ամբիոնում և Հումանիտար գիտությունների ֆակուլտետում:



Յուցանիշ 2.16. Ուսանողների առաջադիմության դինամիկան ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի)

Յուցանիշ 2.16	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21
